



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am


«Պատմական հուշարձանների և կուլտուրական մյուս արժեքների պահպանության նկատմամբ հոգատարությունը Հայկական ՍՍՀ ֆազաբացիների պարտքն ու պարտականությունն է»:
(ՀՍՍՀ սահմանադրություն, հոդված 66)

Վաղ բրոնզեդարյան բնակավայր Շենգավիթը գտնվում է ՀՍՍՀ մայրաքաղաք Երևանի հարավ-արևմտյան եզրին՝ Հրազդանի գետի ձախ ափին:

Վաղ բրոնզեդարյան հնագիտական հուշարձանների շարքում (մ. թ. ա. III հազարամյակ), Շենգավիթը հանդիսանում է նշանավոր բնակավայրերից մեկը:

Այս հնագույն հուշարձանի հետազոտմամբ սկսել են զբաղվել 1936 թ., հնագետ Ե. Բալբուրդյանի ղեկավարությամբ: Այդ պեղումները շատ կարճ տևեցին (մինչև 1938 թ.), որից հետո շուրջ 20 տարի այդ հուշարձանը մոռացության էր մատնված և պեղումները վերսկսվեցին 1958 թ. հնագետ Ս. Սարգսյանի ջանքերով:

Պեղումների բնօրինակ տեսքը




Կլոր կացարաններից մեկը

Բնակավայրը զբաղեցնում է մոտավորապես 6 հեկտար տարածություն, ուր հյուսիս-արևմտյան ուղղությամբ գոյություն ունեցող աննշան բնական թեթուքները կազմում է նիշերի 2 մետր տարբերություն: Դրանից հետո թեթուքները խիստ անկում է, առաջացնելով զառիթափ ղեպի Հրազդան գետը:

Հնագիտական հետազոտությունները պարզեցին, որ այստեղ առկա են շորս հնագիտական շերտեր, որոնք գոյացել են մի քանի հարյուրամյակների ընթացքում և ընդհանուր առմամբ կազմում են 4 մ խորությամբ շերտ:



Վերին շերտի պեղումներով բացվեց բնակելի շենքերի մի ամբողջ համակարգ՝ բաղկացած լավ պահպանված կլոր կացարաններից և նրանց կից ուղղանկյուն և շեղանկյուն օժանդակ սենյակներից: Պահպանվել են նաև ձվաձև հատակազրծով տներ:

Բնակավայրի հատակագծի վրա կարելի է տեսնել կառուցապատման որոշակի համակարգ, ուր կլոր հատակագծով շենքերն ստեղծում են հանդուցային կետեր, որոնց շուրջը խմբավորված են տարբեր ֆունկցիոնալ նշանակություն ունեցող ուղղանկյուն և շեղանկյուն սենյակներ: Կացարանների պատերը կառուցվել են որոշակի շափ ունեցող հում աղյուսից, քարն հիմքի վրա: Աղյուսի շափերով օգտվում էին որպես մոզուլ, որով որոշվում էին պատերի հաստությունները, մուտքերի շափերը և բնակարանի այլ պարամետրերը: Կլոր կացարանում մեղ հաշովեց տեսնել կեղծ թաղի կոնստրուկտիվ սկզբունքի կիրառում, երբ շարվածքի վերին շարքերը մի փոքր դուրս են դրվում ներքևի շարքերի նկատմամբ: Դա պատերին հաղորդում է աննշան թեքվածություն, որը միևնույն ժամանակ փոքրացնում է ծածկվող թռիչքները: Այդպիսի տները արտաքինից հիշեցնում էին բոշվորների վրանները:



Վերակառցված գլուխ

Ոսկե իւեւ




Կանացի արձանիկ



Պեղումների րեզիանուր տեսք



Հավանք



Ամանների բոնակներ և կափարիչ


Պատերը ներսից եղել են սվաղված և տեղ-տեղ նկատելի են ներկերի մնացորդներ: Յավոք, շեն պահպանվել բնակարանների կոնստրուկտիվ մասերի հետքեր:

Կլոր, ինչպես և ուղղանկյուն կացարանների մի մասի մեջտեղում, հատուկ հիմքի վրա, տեղադրված է օջախը, հատակից որոշակի բարձրության վրա օջախի երեք ելուստները ծառայել են տաքացվող ամանների տեղադրման համար, որոնց վերևի մակերեսը ամբողջովին ծածկված է եղել երկրաշափտական զարդանախշերով: Վերջինս առավել արտահայտչական և գրավիչ է դարձնում ամբողջ օջախը: Ելուստներից մեկի վրա պահպանվել է կլոր փորվածք, որը հիշեցնում է գնդի սեղմվածքի հետքը: Օջախի մոտակայքում միշտ եղել է տեղա-

դրված աղորիքը և մի մեծ քար, վերևի հարթ մակերեսով, որը հավանական է կրել է ծածկը պահող կենտրոնական սյունը:

Այդ կոնստրուկտիվ համակարգը համարյա առանց զգալի փոփոխությունների պահպանվել էր այն բնակարաններում, որոնք նկարագրել էր դեռ Քսենոֆոնը: Այդ նույն սկզբունքը պահպանվել է մինչև մեր օրերը՝ մարմնավորված «Հազարաշեն» ժողովրդական բնակելի տան մեջ, որը մեծ տարածում է գտել Հայաստանի տարբեր շրջաններում: Այստեղից էլ շինարարական արվեստի այն կապը, որը գոյություն ունի հայկական բարձրամանրակում հնում բնակվող ցեղերի և մերօրյա բնակչության միջև:

Բոլոր կացարանների հատակները



Օջախ



Օջախի հենակ

համարյա հորիզոնական են: Նրանց կոնստրուկտիվ լուծումը միանգամայն պարզ է, խտացված մանր խիճ, որի վրա սվաղվում էր կավե հարդախառն շաղախի շերտը: Նման հատակներ թոնրատներում կամ գոմերում հնարավոր է հանդիպել այժմ, Հայաստանի տարբեր շրջաններում:

Շենգավիթ հնագիտական հուշարձանի զգալի առավելությունը նույն զարաշրջանին պատկանող մի շարք հուշարձանների նկատմամբ արտաքին պարիսպների և ստորգետնյա զաղտնի գետնուղու առկայությունն է այս հուշարձանում:

Պարիսպը շարված է եղել խողոր որձաքարերից կոնստրուկտիվ:

Գաղտնի ստորգետնյա անցուղու մուտքի մոտ բարձրացել է ուղղանկյուն պաշտպանական աշտարակը:

Պարիսպը կառուցելիս հաշվի են առել տարածքի հատակագծային փոփոխությունները, որոնք պարսպի հատակագծին հաղորդել են բազմանկյան ձև:

Քամանյան Յուրի Ալեքանդրի

ՇենԳԱՎԻԹ

© ՀՍՍՀ պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության ընկերություն

Մասն. խմբագիր՝ Բ. Ն. Առաքելյան
 Խմբագիր՝ Ս. Վ. Ստեփանյան
 Նկարիչ՝ Ս. Ս. Մկրտչյան
 Տեխն. խմբագիր՝ Ա. Գ. Ասրյան
 Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Հ. Ղազարյան

Հանձնված է շարվածքի 21.07.1986 թ.:
 Ստորագրված է տպագրության
 14.07.1987 թ.: Տորմատ՝ 84×108¹/₃₂:
 Թուղթ՝ «Կավճապատ», տպագր. 0,42
 պսյմ. մամ. հրատ.՝ 0,4 մամ.: Պատվեր
 782: Տպաքանակ 10000: Գինը 15 կոպ.:
 ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առտրի գործերի պետական կոմիտեի № 2 տպարանի մասնաճյուղ,
 Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. № 26: